

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է ներքին մրցույթ՝ գիտության քաղաքականության վարչության գիտության բնագավառի տվյալների հավաքագրման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.1-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության բնագավառի տվյալների հավաքագրման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.1-Մ2-4) քաղաքացիական ծառայության պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված գործառույթների, իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝

<http://scs.am/files/havelvats-10-18-1-27.1-m2-4.pdf>

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. դիմում (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),
2. անձնագրի և/կամ նույնականացման քարտի լուսապատճենները (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսապատճենը),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
5. արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի լուսապատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսապատճենը,
6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԱՌՑԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ուշադրություն. Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները («Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 2):

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են էլեկտրոնային եղանակով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ <https://cso.gov.am/> միջոցով:

Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել <https://cso.gov.am/> կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական» ենթաբաժին: Ծանոթանալով ՀՀ գիտության կոմիտեի կողմից

Թեստավորման մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «**Դիմել**» ստեղնի օգնությամբ ներկայացնել էլեկտրոնային դիմում: Սեղմելով «**Դիմել**» ստեղնը՝ բացվում է «**Մուտք**» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «**Գրանցվել**» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «**Մուտք**» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում՝ «**Իմ էջը**» բաժնում («**Ծանուցումներ**» (զանգակ նշանի տեսքով է) բաժնի կողքը), լրացնել անձնական տվյալները և «**Կրթություն**», «**Օտար լեզուներ**», «**Համակարգչային ծրագրեր**» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «**Պահպանել**» կոճակը:

Լրացնելով «**Իմ էջի**» անձնական տվյալները, կցելով պահանջվող փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «**Մրցույթներ**» բաժնում գտնել Գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության բնագավառի տվյալների հավաքագրման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.1-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին հրապարակված հայտարարությունը և «**Գործողություններ**» ենթաբաժնի ներքո նշված «**Դիմել**» կոճակով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Դիմումի կարգավիճակի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ նաև օգտատիրոջ անձնական էջի «**Մրցույթներ**» բաժնի «**Հայտարարություններ**» ենթաբաժնում կոնկրետ պաշտոնի համար հայտարարված մրցույթի տողում «**Գործողություններ**» ենթաբաժնի ներքո գրառումից. նշված հատվածում՝

ա) եթե ակտիվ է «**Դիմել**» ստեղնը, ապա դիմումը դեռևս գրանցված չէ,

բ) եթե ակտիվ է «**Իմ դիմումը**» ստեղնը, ապա դիմումը ներկայացված է ՀՀ գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին, և այն ուսումնասիրման փուլում է,

գ) եթե ակտիվ է «**Խմբագրել**» ստեղնը, ապա անհրաժեշտ է խմբագրել դիմումը՝ շտկելով փաստաթղթերի թերություններն ու սխալները, և կրկին ներկայացնել այն:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ **2 (երկու) աշխատանքային օրվա** ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «**Իմ էջի**» «**Ծանուցումներ**» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «**Իմ էջի**» «**Մրցույթներ**» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված \oplus նշանը:

Փաստաթղթերը խմբագրելու համար անհրաժեշտ է այցելել «**Անձնական էջ**»-ի «**Մրցույթներ**» բաժնի «**Հայտարարություններ**» ենթաբաժին, ընտրել կոնկրետ պաշտոնի համար հրապարակված հայտարարությունը, «**Գործողություններ**» ենթաբաժնի ներքո նշված

«**Խմբագրել**» կոճակը սեղմել, կատարել փոփոխությունները և ներքևում նշված «**Դիմել**» կոճակի միջոցով դիմումը կրկին ներկայացնել:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «**Անձնական էջ**» կարող է մուտք գործել՝ այցելելով <https://hartak.cso.gov.am/> հղումի «**ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋ**» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, հեռախոսահամար՝ 010-21-01-40-107, էլեկտրոնային փոստի հասցե՝ hr@scs.am):

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ – 15.04.2022թ.

ԹԵՍՏԻ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԱՄՍԱԹԻՎ – 16.05.2022թ.

ԹԵՍՏԻ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԺԱՄ - 11:00

ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ - ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական շենք 2, ՀՀ ԿԳՄՍՆ, 4-րդ հարկ

ԹԵՍՏԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ - 90 րոպե

ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

- «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 1-6, 12-17, 23

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121626>

- «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 1-3, 12

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120908>

- «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 3-5, 23

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121477>

- «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 2-6

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24697>

- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 2, 33-38

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139>

• Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու և

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի N 594-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 20-Լ հրաման:

հղումը՝ <http://scs.am/files/GK-kanonadrutyun-20-L-07.05.2020.pdf>

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» N 1121-Լ որոշում.

հղումը՝ <http://scs.am/files/voroshum-17.11.2001-1121-L.pdf>

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 27-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» N 1122 որոշում.

հղումը՝ <http://scs.am/files/voroshum-1122.pdf>

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 27-ի «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» N 1123 որոշում.

հղումը՝ <http://scs.am/files/voroshum-1123.pdf>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012, էջեր՝ 5-8, 45-47, 55, 82, 85, 106

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս. Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013, էջեր՝ 5, 30, 32, 45

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/iirey/#p=2>

- «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 70-129;

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

- «Ինդրի լուծում»

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

- «Հաշվետվությունների մշակում»

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

- «Բարեվարքություն»

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ - 18.05.2022թ.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄ - 11:00

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ - ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, ՀՀ գիտության կոմիտե, 8-րդ հարկ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ - Հարցարան

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓ - 212309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ:

ԱՆՁՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա պատասխանատվության զգացում:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ - hr@scs.am

ՀԱՍՑԵ - ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ

ՀՏՌ-ԱԽՈՍԱՀԱՄԱՐ - 010-21-01-40-107

ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ - 11-04-2022թ.